

ՔՆՆԵԿԱՑՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՍՈՒԹԻՒՆ

Վ. Լուսինյի՝ «Կապիկներ», պատկերազարդ, Թարգմ. Յ. ք. Սառիկեանի,
1905, Թիֆլիզ, 15 կ.

Պ. Վ. Լուսինյի յայտնի է իբրև բնական գիտութիւնները լաւ ժողովրդականացնող գրող և դասախօս: Նրա գրչի տակից դուրս են եկել բազմաթիւ բրօշիւրներ, որոնց ամբողջութիւնը ընդգրկում է տիեզերքի բոլոր երևոյթները: Յ. ք. Սառիկեանը արդէն Թարգմանել էր «Բնական երկու մեծ Թագաւորութիւնները», այժմ տալիս է «Կապիկները» և մտադիր է Թարգմանել պ. Լուսինյի և միւս աշխատութիւնները: Այժմ, երբ վերաբացւում են մեր դպրոցները, հայ մանուկների համար մտաւոր շատ լաւ սնունդ են ներկայացնում յիշած հեղինակի բոլոր ժողովրդականացրած գրքոյկները:

Թարգմանական լեզուն վատ չէ:

Գ. Լեւոնեան՝ «Թեժագրութեան և ցիւրջութեան տարրական դասընթաց», առաջին մաս, 1905, Թիֆլիզ, 20 կ.

Մեր դպրոցները բաւական դուրկ են լաւ կազմած դասագրքերից. այդ կողմից անատութիւն է միմիայն կրօնական դասագրքերի մէջ, որոնց մեծագոյն մասը մի աւելորդ բեռն է և լոկ շահադիտական գործ... Պէտք է մեծ ուշադրութիւն դարձնել միւս առարկաների դասագրքերը կազմելու վրայ: Վերև առաջ բերած դասագիրքը կարող է համարուել՝ աջող ձեռնարկ «Թեժագրութեան և ցիւրջութեան»:

Դոկտոր Կ. Փառայեան, «Ընդարձակ դպրացական առողջապահութիւն», 1905, Ալեքսանդրիա, 2 ը., բաժանորդագրութեամբ:

Այս օգտակար և մեր կրթական գործի համար անհրաժեշտ

հրատարակութիւնը սկսել է լոյս տեսնել պրակներով: Ցարդ տպած 64 երեսներից կարելի է եղրակացնել որ հայ ուսուցիչները, ծնողները և նոյնիսկ հասակաւոր աշակերտները կ'ունենան մի հմուտ ուղեցոյց՝ դպրոցական առողջապահական զանազան հարցերում: Պարզ հճը, բազմաթիւ պատկերները դիւրամատչելի են դարձնում ճոխ բովանդակութիւնը: Յանկալի է, որ մեր բոլոր կրթարանները բաժանորդ գրուեն և այդպիսով արագացնեն այդ աշխատութեան տպագրութիւնը այս ուսումնական տարուայ սկզբում:

С. А. Мелик-Саркисянц, «Хлопковое дѣло въ Ферганской области и мѣры къ его упорядоченію», Москва, 1904 г.

Ինչպէս գրքի վերնագրից երևում է, որ պ. Մելիք-Սարգսեանի նպատակն է ծանօթացնել ընթերցողին բամբակագործութեան այժմեան դրութեան հետ Ֆերգանում, և ցոյց տալ այն միջոցները, որոնց շնորհիւ գիւղատնտեսութեան այդ ճիւղը կարող է զարգանալ այնտեղ:

Դժուար է ամբողջ Ռուսաստանում ցոյց տալ մի տեղ, որը աւելի յարմար լինի բամբակագործութիւնով պարապելու համար, որքան Ֆերգանն է: Այստեղ բամբակի մշակութիւնը վերջին 10—15 տարում արել է մեծ առաջադիմութիւն, որը կարելի է տեսնել հետեւեալ թուերից. 1889 թ. բամբակի ցանքները բոլորում էին 50,396 դեսետին, 2,270,000 փութ բամբակի (կորիզներով) արդիւնաբերութիւնով. մինչդեռ միևնոյն թիւը՝ 1901 թ. հասնում էր 233,685 դեսետինի, 11,688,320 փութ բամբակով: Հետաքրքիր է այստեղ նկատել, որ տեղական բամբակի ցանքները զգալի կերպով պակասում են, իսկ ամերիկական բամբակինը աճում: Օրինակ. 50,396 դես. ցանքներից 22,490 դես. տեղականն էր բոնում, իսկ 27,906 դես. ամերիկականը. մինչդեռ 1903 թուին 149,019 դես. առաջինի ցանքները բոնում էին 12,954 դես., իսկ երկրորդինը՝ 136,065 դես.:

Այդ նոյն աղիւսակից, որտեղ բերուած են վերոյիշեալ թուերը, երևում է, որ բամբակի ցանքների տարածութիւնը վերջին տարիների ընթացքում ոչ թէ չեն աճում, այլ նոյնիսկ զգալի կերպով պակասում են: Այս երևոյթը բացի պատահական պատճառներից, բացատրւում է, գլխաւորապէս նրանով, որ Ֆերգանում համարեա էլ ազատ հող չի մնացել և երկրորդ, որ կեանքի համար անհրաժեշտ պիտոյքների գները շատ բարձր են, այնպէս, որ Ֆերգանի գիւղացիք ստիպուած են աճեցնել Սեպտեմբեր, 1905.